ՏԵՂԵԿԱՆՔ

«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության վավերացման նպատակահարմարության վերաբերյալ

«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 10-ին:

Պայմանագիրը նախատեսում է հարցումների ուղարկումն իրականացնել էլեկտրոնային եղանակով, սակայն որոշված չեն փոխգործակցության հստակ մեխանիզմներ:

Ելնելով վերոգրյալից՝ անդրազգային հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, ԱՊՀ մասնակից պետությունների իրավասու մարմինների, ինչպես նաև անվտանգության և իրավակարգի ոլորտում գործող ԱՊՀ ոլորտային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման առկա մեխանիզմների կատարելագործման և տեղեկատվական փոխգործակցության ամրապնդման նպատակով, Պայմանագրում փոփոխություններ կատարելու համար, ԱՊՀ մասնակից պետությունների իրավասու մարմինների փորձագիտական խմբի կողմից մշակվել է «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ):

Նախագծով նախատեսված փոփոխությունները հնարավորություն կտան ԱՊՀ մասնակից պետությունների իրավասու մարմիններին տեղեկատվական փոխհամագործակցության շրջանակներում կիրառել փաստաթղթի էլեկտրոնային պատճենը (թղթային կրիչով փաստաթղթի՝ սկանավորման (լուսանկարման) միջոցով էլեկտրոնային տարբերակի վերածված պատճենը):

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց

միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության վավերացումը գտնում է նպատակահարմար:

Միաժամանակ, հայտնում ենք, որ Արձանագրության կնքումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրի 1.1-ին (Արտաքին քաղաքականություն) բաժնի տասնհինգերորդ պարբերության (Հայաստանը շարունակելու է ակտիվ մասնակցել ԱՊՀ շրջանակներում համագործակցությանը և կազմակերպությունում ընթացող գործընթացներին: Շարունակվելու է կարևորվել նաև ԱՊՀ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացումը) նպատակից:

ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ ***Արմեն Ղազարյան***